Արձանագրություն N 3

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11>> ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	20.09.2019թ. ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝	Դ. Շատվերյան
	Ռ. Եղիազարյան
	Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝	Ֆ. Սարգսյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 27.08.2019թ.

ա) հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

բ) ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում (30.08.2019թ. դրությամբ) ներկայացվել են:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- 15.04.2016թ. կնքված N <<ՔՆ-ՊԸԱՇՁԲ-16/16>>, 14.09.2019թ. կնքված N <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/42-2>> և 15.04.2016թ. կնքված <<ԱՄՀՀ-ԲՀԱՀԾՁԲ-16/10>> պայմանագրերի անբաժանելի մաս հանդիսացող N3 և N3.1 Հավելվածները բացակայում են,

- Մասնակցի կողմից Հավելված N 3.2-ով ներկայացված աշխատակիցների համար աշխատանքային փորձը նկարագրված է ընդհանրական բնույթով (նախագծման աշխատանքներ), որը հնարավորություն չի տալիս գնահատել նշված աշխատակցի համապատասխան աշխատանքային փորձառությունը,
- Բացակայում են Հայկ Մեսրոպյանի և Գագիկ Մադաթյանի մասնագիտական որակավորումը հիմնավորող փաստաթղթերը (դիպլոմ),
- Գնել Հարությունյանի և Սասուն Միրզոյանի ներկայացրած դիպլոմները չունեն բարձրագույն կրթության որակավորում,
- Բացակայում է հրավերով պահանջվող ճարտարագետ-կոնստրուկտորի գործունեություն իրականացնելու առաջին դասի <Ա1> ենթադասի արտոնագիրը կամ <Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)> լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող <<Բնակելի, հասարակական և արտադրական>> ներդիրը,
- <<Էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր>> և <<Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր>> ներդիր ունեցող առանձին պահանջվող մասնագետների փոխարեն ներկայացվել է վերոգրյալ ներդիրներն ունեցող մեկ անձ (Գոհար Սահակյան),
- Որպես որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ բացակայում է հրավերով ներկայացված գեոդեզիստի համար պահանջվող ՀՀ կառավարության 29.09.2011թ. N1441 որոշման հիման վրա տրվող վկայականը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունների մասին 13.09.2019թ. ծանուցվել է Մասնակցին, որն էլ սահմանված ժամկետում (17.09.2019թ. դրությամբ) շտկել է դրանք:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան